Հաստատվում է
գիտաքարտուղար՝ Ա. Գևորգյան
18.07.2024 թ.

Փորձաքննության և վերլուծությունների
վարչության գիտական փորձաքննության
բաժնի պետ Նաիրա Նազարյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության գիտական փորձաքննության բաժնի փորձագետի կողմից 22.05.2024 թ. – 18.07.2024 թ. ժամանակահատվածում իրականացվել են Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության գիտական փորձաքննության բաժնի գործառույթներից բխող հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել եմ «Հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր 2024» մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպման աշխատանքներին, մասնավորապես՝ աջակցել եմ մասնագիտական փորձագիտական խորհրդին տրամադրելով համապատասխան տվյալներ հայտերի վերաբերյալ, հավաքագրվել են հայտերի գիտական փորձաքննության համար հնարավոր փորձագետների ցանկերը և տրամադրվել համապատասխան տվյալներ: Իրականացրել եմ աշխատանքներ գիտական փորձաքննության գործընթացում օտարերկրյա փորձագետներ ներգրավելու նպատակով, ծանուցումները և տեղեկատվության փոխանակումը կատարվել է էլեկտրոնային եղանակով: Ներկայումս իրականացվում են գիտական փորձաքննության հերթական փուլի կազմակերպման աշխատանքները:

2. Մասնակցել եմ «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին ներկայացված 223 հայտերի մրցույթի պայմաններին համապատասխանության ստուգման աշխատանքներին, այնուհետև մշակվել և բաժնի պետին է ներկայացվել համապատասխան վերլուծական տվյալներ (վերլուծություն կատարվել է՝ ըստ խմբի ղեկավարների տարիքի, սեռի, կազմակերպությունների, մասնագիտական բնագավառների և այլն):

3. ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման առցանց համակարգում (https://grants.hesc.am) գրանցված

օգտատերերին տրամադրել եմ խորհրդատվություններ առաջացած տեխնիկական խնդիրները կարգավորելու նպատակով:

Փորձաքննության և վերլուծությունների
վարչության գիտական փորձաքննության
բաժնի փորձագետ Մարինա Տիմոտինա

18.07.2024 թ.